



Պայթյուն բեռնազնայանում



Կարունելների անվտանգությունը հսկողության փակ է



Երբ աշխատանքը երջանկացնում է



... 47 փարի այրվում է



արտակարգ թերթ

N 20 (389) 3.6.2011 - 9.6.2011 www.emergency.am

Արտակարգ դասընթաց



Հյոգոի 2005-2015 թթ. գործողությունների ծրագրի հինգ հատուկ նպատակներից է աղետների նվազեցման կարևորության մասին իրազեկության բարձրացումը՝ որով կխթանվի ծրագրի իրագործումը: Հաշվի առնելով այս փաստը՝ Արտակարգ իրավիճակների նախարարության լրատվական քաղաքականությունն իրագործող «Արտակարգ ալիք»

լրատվական կենտրոնը, տարբեր ծրագրերի շրջանակներում, մշտապես դասընթացներ է անցկացնում արտակարգ իրավիճակները լուսաբանող լրագրողների համար:

Հունիսի 2-ին լրատվամիջոցների համար տեղի ունեցավ դասընթաց՝ «Աղետների ռիսկի նվազեցումը և լրատվությունը» թեմայով՝ «Աղետների ռիսկերի

նվազեցումը և կրթությունը ծրագրի շրջանակներում»: Ծրագիրն անցկացվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ և եվրոպական հանձնաժողովի ֆինանսավորմամբ: Դրա նպատակն է աջակցել իշխանության մարմիններին՝ Հյոգոյի գործողությունների ծրագրի (ՀԳԾ), դրա կրթական առաջնահերթությունների պահանջները կրթության ազգային համատեքստում ներկայացնելու գործում, ինչպես նաև աջակցել համայնքներին և կրթական հաստատություններին մշակելու այնպիսի ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան ավելի արդյունավետորեն պատրաստվել, նվազեցնել և դիմակայել աղետներին, և երեխաների համար ապահովել ավելի անվտանգ և պաշտպանողական միջավայր:

Ըստ այդմ, ԱԻՆ հասարակայնության պետ, «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնի տնօրեն Նիկոլայ Գրիգորյանը լրագրողներին ներկայացրեց Հայաստան-

նի սպառնացող արտակարգ իրավիճակներն ու դրանց ռիսկերը, լրատվության տեղն ու դերը աղետների ռիսկի նվազեցման ոլորտում, Հյոգոյի գործողությունների ծրագիրն ու աղետների ռիսկի նվազեցման ՀՀ ազգային պատճուրդը՝ ԱՌՆԱՊ, ԱԻՆ տեղեկատվական քաղաքականությունը, արտակարգ իրավիճակներում լրատվության սկզբունքներն ու առանձնահատկությունները:

Այդ սկզբունքներից առաջինն ու հիմնականն է. լրատվությունն արտակարգ իրավիճակներում նման է սննդի, այն պետք է տրվի ժամանակին և անհրաժեշտ քանակով: Ճիշտ և հուսալի տեղեկատվությունն աղետների ու ճգնաժամերի արդյունավետ կառավարման անկյունաքարն է: Մասնակիցներին ներկայացվեցին իրական օրինակներ, երբ ՁԼՄ-ների սխալ աշխատանքը արտակարգ իրավիճակի դեպքում հանգեցրել է խուճապի կամ ավելի է մեծացրել աղետի հետևանքները:

ցարկվեցին ուսուցողական տեսաֆիլմ-տեսահոլովակներ, խաղարկվեցին արտակարգ իրավիճակների սցենարներ:

Մասնակիցները, որոնք հիմնականում Հայաստանի մարզերից էին, շրջեցին նաև «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնում, տեսան, թե ինչպես է ստեղծվում «Արտակարգ թերթի» հեթոթական համարը: Տեսան նաև «Արտակարգ ալիք» հաղորդաշարի հեռուստատաղավարը, հետևեցին հեռուստատեսային նյութերի պատրաստման աշխատանքներին:

Մելինե Մարտիրոսյան, Կապանի «Սուսի» հեռուստաընկերություն:

- Երբեք խոշոր արտակարգ պատահար չեմ լուսաբանել, բայց հստակ գիտակցում եմ, որ լրագրողը միշտ պիտի պատրաստ լինի: Լուսաբանելիս պիտի ինքն էլ խուճապի չմատնվի, պիտի կարողանա իր աշխատանքը կալ կատարել՝ միաժամանակ չխանգարելով փրկարարների ու ոստիկանների աշխատանքներին: >>> 4

Եվրոպան իրար է խառնվել

Վարակի աղբյուրը իսպանական վարունգը չէ

Եվրոպան սարսափահար է եղել վտանգավոր աղիքային ցուպիկից, որն արդեն 17 մարդու մահվան պատճառ է դարձել, ամբողջ մայրցամաքում հիվանդացել են հարյուրավոր մարդիկ: Եվրոպացիները մեղադրում էին գյուղմթերք արտադրող իսպանացիներին և արգելում իսպանական բանջարեղենի ներկրումը:

Գերմանիայում հայտարարել են, որ աղիքային վարակի երբեք գրանցված այս բռնկումը ամենահզորն էր: Դրա առանձնահատկություններից է արագ տարածումը և հիվանդության ծանր ընթացքը, ինչպես նաև այն փաստը, որ հիմնականում վարակվում են կանայք (մահացածներից 13-ը կանայք են):

Իսպանացիները վրդովված են՝ այդ մեղադրանքներն անհիմն են, Իսպանիայում հիվանդության ոչ մի դեպք չի գրանցվել, իսկ խուճապ տարածում են ՁԼՄ-ները: Արտադրողները հաշվում են կորուստները, բժիշկները խորհուրդ

են տալիս, թե ինչպես խուսափել հիվանդությունից:

Գերմանական Spiegel-ը գրում է, որ իսպանական վարունգներն «արդարացվել են»՝ դրանք չեն համարվում վարակի աղբյուր: Այդ մասին հայտնել է երկրի առողջապահության նախարարը:

Համբուրգի շուկայում երկու իսպանական վարունգների վրա հայտնաբերված շտամը E.coli O104-ի շտամ չէ, որն իր հերթին հայտնաբերվել էր վարակված հիվանդների մոտ:

Այդպես, նախարարի խոսքերով, որոնումները պետք է նորից սկսել:

«Տազնապ Եվրոպայում. աղիքային ցուպիկը տարածվում է», - փաստում է The Wall Street Journal-ը: Թերթը գրում է, որ եվրոպացիներն իրար վրա են գցում ցուպիկի տարածման հանելուկային աղբյուրի առաջացման մեղքը:

Հոդվածում ասվում է. «Հիվանդության տարածումը ստիպել է Ռուսաստանին արգելել որոշ թարմ մրգերի ներմուծումը Գերմանիայից և Իսպանիայից՝ վախե-

նալով, որ այն վարակված է, մինչդեռ ավստրիական իշխանությունները ստուգողներ են ուղարկել սուպերմարկետներ, որպեսզի համոզվեն, որ իսպանական բանջարեղենը հանվել է վաճառքից»:

Գերմանիայում, որտեղ հիվանդությունների ամենամեծ թիվն է գրանցվել և մահացություններն ու հայտնի դեպքերը, չի մոլմիկները հայտարարում էին, որ, իրենց կարծիքով, Իսպանիայում վարունգի որոշակի քանակ վարակվել է աղիքային ցուպիկով, բայց վարակի աղբյուրը հստակ պարզված չէ: ԵՄ ներկայացուցիչը նշել է, որ տրանսպորտային շղթան երկար է եղել, և իսպանական վարունգը կարող էր վարակվել երթուղու ցանկացած կետում:

Իսպանիայի Գյուլատնտեսության նախարար Ռոսա Ազիլարը հայտնել է, որ «ճիշտ չէ, թե բռնկումը սկսվել է Իսպանիայում»: Նա ասել է, որ Գերմանիայի իշխանությունները պետք է դադարեցնեն մեղադրանքներն Իսպանիայի դեմ: «Առանց պատճառի» են աղիքային վարակի տարածման հա-



մար մեղադրվում իսպանական գյուղմթերք արտադրողները, վստահ է El Pais-ը: Խմբագրության կարծիքով՝ գյուղմթերքների համար սահմաններ փակելն այս պարագայում ավելորդ է, իսկ խուճապային և հիսթերիկ տրամադրությունները հիմնավորված չեն և պետք է դադարեցվեն:

Հենց տեղեկատվական արշավն է գլխավոր սխալը, համոզված է իսպանական թերթը:

Տազնապի ազդանշանը պետք էր տալ պաշտոնական ալիքներով՝ իսպանական և գերմանա-

կան կողմերի մեկնաբանություններով, բայց դրա փոխարեն մամուլի միջոցով տարածվեց միտքն այն մասին, որ վարակի պատճառն իսպանական վարունգի խմբաբանակն էր:

Արտադրության ու տարածման մասին տարրական գիտելիքները բավարար էին հասկանալու համար, որ վարակումը կարող էր տեղի ունենալ ոչ միայն արտադրության փուլում, այլև հենց Գերմանիայում՝ տեղափոխման կամ պահպանման ժամանակ:

>>> 4



Թունավորումներ

Մայիսի 26-ին, ժամը 14.57-ին տեղեկություն է ստացվել, որ քիմիական թունավորումով (խմել է յուղաներկի լուծիչ) «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Վեդի քաղաքի բնակչուհի՝ 1987 թ. ծնված Անահիտ Մելքոնյանը:

Տուժածի առողջական վիճակը բժշկները գնահատել են միջին ծանրության:

• Նույն օրը, ժամը 15.29-ին տեղեկություն է ստացվել, որ դեղորայքային թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն է տեղափոխվել Երեւանի Գարավ-արեւմտյան Բ-4 թաղամասի 26/4 շենքի 26-րդ բնակարանի բնակչուհի՝ 1989 թ. ծնված Մարիամ Դավթյանը:

Ըստ բժիշկների՝ նրա առողջական վիճակը միջին ծանրության է:

• Մայիսի 27-ին, ժամը 18.50-ին ստացված տեղեկության համաձայն՝ թունավորման նշաններով Աշտարակի հիվանդանոց է տեղափոխվել նույն քաղաքի Սպանդարյան 16 շենքի թիվ 39 բնակարանի բնակչուհի՝ 1935 թ. ծնված Ազնիվ Գեւորգյանը:

Բժիշկների գնահատմամբ՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Սելավաջրերը քանդել են գյուղամիջյան ճանապարհը

Մայիսի 26-ին, ժամը 16.42-ին տեղեկություն է ստացվել, որ տեղացած հորդառատ

անձրեւներից առաջացած սելավաջրերը քանդել են Լոռու մարզի Չորագետ գյուղի գյուղամիջյան ճանապարհները եւ ողողել Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհը՝ դարձնելով այն դժվարանցանելի:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Տեղում պարզվել է, որ սելավաջրերի հոսքը դադարել է, վնասվել են գյուղամիջյան ճանապարհները, իսկ Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհը լցվել է ջրաբերունկներով: Գնապարհի մաքրման աշխատանքներն իրականացվում են «Լոռու ճանշին» ՓԲԸ-ի աշխատակիցների ուժերով:

Ժամը 18.00-ի դրությամբ Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհն անցանելի է:

Գետերը վարարել են

Մայիսի 31-ին, ժամը 09.05-ին տեղեկատվություն է ստացվել, որ Եղեգիս գետի վարարման հետեւանքով վնասվել է Վայոց ձորի Գետափ գյուղը սնուցող խմելու ջրագծի մոտ 3 մ երկարությամբ հատվածը: Գետի վարարման հետեւանքով ողողվել են Գե-



տափ գյուղին պատկանող մոտ 3 հա մշակովի հողատարածքներ, Վայոց ձորի Դերմոն գյուղին պատկանող մշակովի հողատարածքներ եւ ջրածածկման վտանգ է սպառնում հետիոտնային երկու կամրջի, ողողվել է Շատին-Եղեգիս միջհամայնքային ավտոճանապարհի մոտ 30 մ երկարությամբ ճանփեզրի հատվածը եւ 1000 քմ պտղատու այգի:

Դեպքի վայր է մեկնել Վայոց ձորի ՄՓՎ օպերատիվ խումբը:

Ողողված հողատարածքների չափը ճշտվում է, իսկ հետիոտնային երկու կամրջին ջրածածկման վտանգ չի սպառնում: Գնապարհը դարձել է միակողմանի երթուղի, ողողման շարունակվելու դեպքում

կղաճառ անանցանելի:

• Մայիսի 31-ին, ժամը 19.30-ին տեղեկություն է ստացվել, որ Գավառ գետի վտակը վարարել է եւ ջրածածկման վտանգ է սպառնում Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի ավանները հողատարածքներին: Դեպքի վայր է մեկնել Գեղարքունիքի մարզային փրկարարական ջոկատը:

Մինչեւ ժամը 21.15-ը փրկարարների եւ գյուղացիների համատեղ ուժերով իրականացվել են գետի հունի պատերի եւ ավապատները ամրացման աշխատանքներ: Երեկոյան գետում ջրի մակարդակը նվազել է:

Երեխան չի տուժել

Մայիսի 27-ին, ժամը 01.33-ին Գ. Գարությունյանից ահազանգ է ստացվել, որ Երեւանի Ուլնեցու 2-րդ փակուղու թիվ 3 շենքի 10-րդ բնակարանում իր ամուսինը, որը հիվանդ է շաքարային դիաբետով, չի արձագանքում դրան զանգերին: Տանն է նսեւ իրենց 2 տարեկան երեխան եւ դուռը բացելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ԵՎԿ օպերատիվ եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խմբերը:

Փրկարարները բացել են նշված բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1977 թ. ծնված Միքայել Խամեյանը՝ անգիտակից վիճակում: Երեխան չի տուժել:

Պարամեդիկները տուժածին ցույց են տվել 1-ին բուժօգնություն եւ հանձնել շտապօգնության աշխատակիցներին:

Ողջ է մնացել

Մայիսի 27-ին, ժամը 13.49-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Գրազդանի մեծ կամրջից քաղաքացի է ընկել եւ ողջ մնացել:

Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ԵՎԿ օպերատիվ խմբերը՝ պարամեդիկներով:

Պարզվել է, որ Գրազդանի մեծ կամրջին հարակից տարածքում գտնվող պոմպակայանից գետն է ընկել Երեւանի բնակիչ Արսեն Դակոբյանը (35-40 տարեկան): Անկման հետեւանքով Ա. Դակոբյանը ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ եւ, մինչեւ փրկարարների ժամանելը, տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն:

Տուժածի առողջական վիճակը ծայրահեղ ծանր է:

Կարկտահարություն

Մայիսի 27-ին ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 16.10-ի սահմաններում տեղացած ուժեղ կարկտի հետեւանքով վնասվել են Սյունիքի մարզի Նորաշենիկ, Առաջածոր, Ներքին Խոտանան, Շրվենանց, Ուխտավայր եւ Տուրոս գյուղերի բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածքներն ու պտղատու այգիները:

Կարկտահարված տարածքները «ՄեՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կողմից չեն վերահսկվում:

Անկում դիպահարթակից

Մայիսի 28-ին, ժամը 22.08-ին տեղեկություն է ստացվել, որ Երեւանի «Վերածնված Դայաստան» հուշարձանի դիտահարթակից (Կասկադում) քաղաքացի է վայր ընկել եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ եւ ԵՎԿ օպերատիվ խմբերը՝ պարամեդիկներով:

Դեռեւս չպարզված հանգամանքներում 1995 թ. ծնված Տաթևիկ Սահակյանը դիտահարթակից (մոտ 30 մ բարձրություն) վայր է ընկել շինհրապարակի դժվարանցանելի հատված է մահացել:

Փրկարարները շինհրապարակից բարձրացրել են դուրս են բերել Տ. Սահակյանի դին:

Օձի խայթոցներ

Մայիսի 31-ին Արագածոտնի մարզից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 15.00-ին օձի խայթոցով Աշտարակի հիվանդանոց է տեղափոխվել Բյուրական գյուղի բնակիչ, 1992 թ. ծնված Դավիթ Ղազարյանը: Բժիշկները տուժածի վիճակը բավարար են գնահատել:

• Մայիսի 31-ին Վայոց ձորից ստացված տեղեկության համաձայն՝ ժամը 16.05-ին օձի խայթոցով Եղեգնաձորի հիվանդանոց է տեղափոխվել մարզի Մալիշկա գյուղի բնակչուհի, 1948 թ. ծնված Թամարա Գարունյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի առողջական վիճակը բավարար է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 17 դեպք:

միջազգային լուրեր

Պայթյուն բենզալցակայանում

Հունիսի 1-ին Ռուսաստանի Կոստրոմա քաղաքում պայթյուն է որոտացել միանգամից երկու բենզալցակայանում: Պայթյուններից հաջորդել է հրդեհը: Ավելի ուշ պարզվել է, որ պայթյունները տեղի են ունեցել հարեւանությամբ գտնվող բենզա եւ գազալցակայանում:



Վերջին տվյալներով՝ միջադեպի հետեւանքով զոհվել է մեկ եւ վնասվածքներ ստացել երեք մարդ:

Դեպքի վայր ժամանած հրշեջներին մեկ ժամում հաջողվել է մարել կրակը: Ըստ նախնական վարկածի՝ պայթել է գազի բա-

լոնը, որին հաջորդել են եւս երկու պայթյուն եւ հրդեհ: Ահաբեկության վարկածը բացառվել է:

Ընկել է գետը

Երեքշաբթի օրը Հնդկաստանում ուղեւորատար ավտոբուսը, որում ավելի քան քառասուն մարդ է եղել, կամրջից ընկել է գետը: Պատահարի հետեւանքով զոհվել է 37 մարդ, եւս վեց ուղեւոր ստացել են ծանր մարմնական վնասվածքներ:

Վթարը տեղի է ունեցել Ասսամ նահանգի հեռավոր շրջաններից մեկում: Հայտնի է, որ ավտոբուսը հարսանքավորների էր տեղափոխում: Ըստ ականատեսների՝ մթնշաղի պայմաններում ավտոբուսի վարորդը չի նկատել ճանապարհային ցուցանակը: Արդյունքում հերթական շրջադարձի ժամանակ ավտոբուսը դուրս է եկել արգելապատնեշ չունեցող փայտե կամրջից եւ ընկել գետը: Փրկարարական աշխատանքները տեւել են մինչ առավոտ:

Իրավապահ մարմինների տարածած հարողագրության համաձայն՝ փայտե կամրջը չի դիմացել ավտոբուսի ծանրությանը եւ փլվել է: Իրականացվում է հետաքննություն:

Անտառային հրդեհներ Կանադայում

Կանադայի Ալբերտ շրջանում ուժգին անտառային հրդեհներ են մոլեգնում: Կրակն արդեն ընդգրկել է 259 հազար հեկտար անտառ:



Թեւե հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում է ավելի քան չորս հարյուր հրշեջ, կրակի տարածումն առայժմ չի հաջողվում կանգնեցնել:

Մահ՝ թունավոր ալկոհոլից

Մայիսի 28-ին Թուրքիայի Բողոլում հանգստավայրում գրանցվել է ռուս զբոսաշրջիկների զանգվածային թունավորում: Ըստ տեղական իրավապահ մարմինների՝ մարդիկ թունավորվել են անորակ ալկոհոլից՝ նավով զբոսանքի ժամանակ: Նույն օրը

տուժածներից մեկը մահացել է: Մայիսի 31-ին Անթալիայի հիվանդանոցում եւս մեկ տուժած է մահացել:

Նավի սեփականատերը ձերբակալվել է: Իրավապահները պարզում են, թե ինչ ճանապարհով է կեղծ ալկոհոլը հայտնվել նավի վրա:

Հունիսի 1-ին Մոսկվայի հիվանդանոցներից մեկում մահացել է Թուրքիայում անորակ ալկոհոլից թունավորված երրորդ զբոսաշրջիկը: Ըստ ոստիկանության՝ 22-ամյա երիտասարդ աղջիկը հիվանդանոց էր տեղափոխվել մեթիլ սպիրտից ստացած թունավորմամբ:

Ավտոբուսն այրվել է

Հունիսի 1-ին Ռուսաստանի Տվերի մարզում իրար են բախվել ուղեւորատար ավտոբուսն ու մարդատար ավտոմեքենան: Վթարի հետեւանքով երկու մեքենաների վարորդներն ու ավտոբուսի վեց ուղեւորները զոհվել են:

Ըստ ոստիկանների՝ վթարը տեղի է ունեցել վաղ առավոտյան: «Վոլկո» մակնիշի մարդատար ավտոմեքենան, դեռեւս անհայտ պատճառներով, դուրս է եկել հանդիպակաց գոտի եւ բախվել ավտոբուսին: Հարվածից ավտոբուսը բռնկվել է:

Ըստ նախնական տվյալների՝ վթարը տեղի է ունեցել մարդատար ավտոմեքենայի վարորդի մեղքով: Իրականացվում է հետաքննություն:



Արտակարգ դասընթաց

<<< 1 Այս գիտելիքներն են, որ այս սեմինարի ընթացքում ստացանք: Ուրախ են, որ մասնակցեցի, կուզենայի, որ նման դասընթացներ հաճախ լինեին:

Արթուր Բարսեղյան, «Քյալան» հեռուստաընկերություն.

- Սեմինարի գլխավոր նպատակն էր լրագրողներին տեղեկացնել արտակարգ իրավիճակների մասին, որպեսզի հետագայում նրանք կարողանան այդ ինֆորմացիան մատուցել հասարակությանը: Ոլորտը լուսաբանելու նրբությունների, արտակարգ իրավիճակների հետևանքները վերացնելու եւ դրանցից առաջ կատարվող նախապատրաստական աշխատանքների մասին շատ ինֆորմացիա ստացա: Ես ինքս ոչ մի արտակարգ դեպք դեռ չեմ լուսաբանել, բայց գիտեմ, որ սեմինարի ընթացքում ստացած գիտելիքները շատ կօգնեն, երբ այդ պահը գա:

Նունե Գուսեփյան, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետ, 3-րդ կուրսի ուսանողուհի.

- Շատ արդյունավետ դասընթաց էր, որովհետեւ յուրաքանչյուր լրագրողի, առավել եւս ապագա լրագրողի համար շատ կարեւոր է տեղեկացված լինել, թե ինչպես է պետք լուսաբանել արտակարգ իրավիճակը: Շատ նոր բաներ սովորեցի: Կուզենայի նաեւ անցնել առաջին օգնության թեմայով դասընթացներ: Օրինակ, ես արդեն 3 տարի է՝ սովորում եմ լրագրության ֆակուլտետում, բայց մինչեւ այսօր չգիտեի, որ չի կարելի ահաբեկիչների հետ հարցազրույց անել, որովհետեւ այդպիսով փաստորեն տարածում ես նրանց գաղափարները:

Էվլարդ Արզումանյան, «Հրապարակ» թերթի Լոռու մարզի թղթակից.

- Սեմինարի ընթացքում շատ օգտակար բաներ սովորեցի: Գրաստանում շատ են աղետների ռիսկերն ու վտանգները,

պետք է կարողանանք դիմակայել դրանց: Որպես լրագրող պիտի ասեմ՝ մեզնից էլ է շատ բան կախված: Մի սխալ բառով կարող ենք թյուր ինֆորմացիա տարածել, որը նոր աղետ կարող է դառնալ: Սեմինարի ընթացքում իմացանք, թե ինչ վտանգներ կան, ինչպես են դրանք դիմակայում եւ ինչպես է պետք լուսաբանել, ճիշտ ինֆորմացիա հասցնել: Ես կոնկրետ հենց արտակարգ դեպքեր եմ լուսաբանում՝ ջրհեղեղ, սողանք, ծանապարհատրանսպորտային պատահարներ: Ու այս դասընթացի ժամանակ շատ նրբություններ սովորեցի: Օրինակ՝ իմացա, թե արտակարգ դեպքերի ժամանակ ինչն է պետք նկարել, իսկ ինչը՝ ոչ. ասեմք՝ եթե ծանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել, մենք միշտ ձգտում ենք մեր լեզվով ասած «չալաղաջ» կադրեր անել, բայց մոռանում ենք, որ այդ կադրը պիտի տեսնի տուժողի կամ մահացածի հարազատը: Եթե կայի առումով շատ բաներ սովորեցի:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. մայիսի 26-ից մինչեւ հունիսի 1-ը ՄՊԱԾ-ի դիտարկման շայաստանի Զանրապետության տարածքում 3 բալ է ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել: **Տարածաշրջանում.** 3 բալ է ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել տասներկու երկրաշարժ: Մայիսի 27-ին 3 բալանոց ստորգետնյա ցնցում է գրանցվել Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Դողուբայազետ քաղաքից 22 կմ հյուսիս-արեւելք: Գաջորդ օրը Իրանի Խոյ քաղաքից 39 կմ հյուսիս-արեւմուտք գտնվող Էպիկենտրոնով երկրաշարժի ուժգնությունը կազմել է 3-4 բալ: Նույն ուժգնությամբ երկրաշարժեր են տեղի ունեցել մայիսի 28-ին եւ 30-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ Մակու քաղաքից 25 կմ հյուսիս եւ 11 կմ հյուսիս-արեւմուտք: Մայիսի 29-ին երկու ստորգետնյա ցնցում է գրանցվել Թուրքիայում՝ Բուլանիկ քաղաքից 32 կմ հարավ-արեւմուտք եւ Երզրում քաղաքից 71 կմ հյուսիս-արեւելք, երկուսն էլ 4 բալ ուժգնությամբ: Այդ օրը Վրաստան-Ադրբեջան սահմանային գոտում՝ Թելավի քաղաքից 60 կմ հարավ-

արեւելք, տեղի է ունեցել 3 բալանոց երկրաշարժ: Դարձյալ 29-ին Ադրբեջանի Շաքի քաղաքից 27 կմ հարավ-արեւմուտք գրանցվել է 4-5 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Մայիսի 30-ին տեղի է ունեցել 5-6 բալ ուժգնությամբ սեյսմիկ իրադարձություն, որի էպիկենտրոնը գտնվում է Ադրբեջանի տարածքում՝ Չաքաբալա քաղաքից 20 կմ դեպի հարավ-արեւմուտք: Երկրաշարժը զգացվել է Չաքաբալայի եւ Բալականի շրջաններում: Նույն էպիկենտրոնային գոտում մայիսի 28-ին եւ 30-ին գրանցվել է 3 բալանոց երկու ստորգետնյա ցնցում: Մայիսի 30-ին տեղի ունեցած երկրաշարժի էպիկենտրոնային գոտին գտնվում է Թուրքիայի Դողուբայազետ քաղաքից 52 կմ հարավ-արեւմուտք, իսկ ուժգնությունը կազմել է 3 բալ:

Տարածաշրջանից դուրս. գրանցվել է 6.2 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որը տեղի է ունեցել հունիսի 1-ին Չիլիի ափամերձ տարածքում, զոհեր եւ ավերածություններ չկան:

ԱԻՆ ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Զանրապետության տարածքում հունիսի 3-ից 7-ը՝ առավելապես գիշերվա առաջին կեսին եւ օրվա երկրորդ կեսին, սպասվում է անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում կտեղափարկուտ: Քամին՝ հարավ-արեւմտյան՝ 3-8 մ/վրկ, 3-ից 7-ը ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 15-23 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը հունիսի 3-ին կնվազի 2-4 աստիճանով, այնուհետեւ եպես չի փոփոխվի:

Օդի ջերմաստիճանը հունիսի 2-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +7... +12, Տավուշում՝ +10... +15, Լոռիում՝ +8... +12, Արագածոտնի նախալեռներում՝ +11... +16, Արարատյան դաշտում՝ +13... +16, Սյունիքի հովիտներում՝ +14... +19, Սյունիքի նախալեռներում՝ +9... +14, Արցախում՝ +12... +17 աստիճանի սահմաններում: Օդի ջերմաստիճանը հունիսի 2-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +15... +20, Տավուշում՝ +18... +23, Լոռիում՝ +15... +20, Արագածոտնի նախալեռներում՝ +20... +25, Արարատյան դաշտում՝ +23... +28, Սյունիքի հովիտներում՝ +23... +26, Սյունիքի նախալեռներում՝ +18... +23, Արցախում՝ +17... +22 աստիճանի սահմաններում: Երեւանում հունիսի 3-ից 7-ը գիշերը առաջին կեսին եւ օրվա երկրորդ կեսին սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: Օդի ջերմաստիճանը հունիսի 3-ի գիշերը կտատանվի +15... +17, ցերեկը՝ +28... +30 աստիճանի սահմաններում:

ՀՀ-ում գրանցված պայթուցիկ սարքերի տեղադրման մասին ահազանգերի վերաբերյալ

2003-2011 թթ. (մինչեւ մայիսի 28-ը) հանրապետությունում գրանցվել է պայթուցիկ սարքերի տեղադրման վերաբերյալ 64 ահազանգ, որից 49-ը (76.6%-ը)՝ Երեւան քաղաքում: Արձագանքման ընթացքում իրականացված զննումների արդյունքում միայն 1 դեպքում է հայտնաբերվել պայթուցիկ սարք (2003 թ. օգոստոսի 31-ին Երեւան քաղաքում՝ Անդրֆեդերացիայի փողոցի 2-րդ փակուղու թիվ 4 տանը հայտնաբերվել է ինքնաշեն պայթուցիկ սարք): Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2003-2011 թթ. ահազանգերի հիմնական մասը վերաբերում է ուսումնական հաստատություններին (25%-ը), բնակե-

լի շինություններին (20.2%-ը, որից 10.9%-ը՝ բնակելի շենքերին), պետական կառավարման (տեղական ինքնակառավարման) մարմինների շենքերին (18.5%-ը) եւ սոցիալ-կենցաղային նշանակության օբյեկտներին (18.5%-ը): ՀՀ մարզերում նշված բնույթի ահազանգեր գրանցվեցին Արագածոտնի (4), Արմավիրի, Կոտայքի, Շիրակի (3-ական), Սյունիքի եւ Տավուշի (1-ական) մարզերում (15 ահազանգ, որից 7-ը (մոտ 47%-ը)՝ ուսումնական հաստատություններում տեղադրված լինելու վերաբերյալ): Թեեւ դիտարկվող ժամանակահատվածում ահազանգերի առավելագույն թվաքանակը

գրանցվեց 2010 թ. (13 դեպք), 2011 թ. առաջին 5 ամիսների ընթացքում ցուցանիշը հասավ 10-ի (2003 թ. նույն ժամանակահատվածում՝ 2, 2004 թ.՝ 5, 2005 թ.՝ 2, 2006 թ.՝ 1, 2007 թ.՝ 4, 2008 թ.՝ 1, 2009 թ.՝ 2, 2010 թ.՝ 8 դեպք): Ընդ որում՝ 2011 թվականի առաջին 5 ամիսների ընթացքում գրանցված ցուցանիշերը նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճեց միջինը 5 անգամ: 2003-2011 թթ. ընթացքում պայթուցիկ սարքերի տեղադրման վերաբերյալ ահազանգերին ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ստորաբաժանումների կողմից իրականացվել է 140 ելք, որից 68-ը՝ 2010-2011 թթ. ընթացքում:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am


Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ստացիացիայի անդամ «Էլիտ գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Վերլուծություն

Եվրոպան իրար է խառնվել

Վարակի աղբյուրը իսպանական վարունգը չէ

<<< 1 «Այժմ այդ խառնաշփոթն ուղղելն այլևս անհնար է, իսկ տնտեսական վնասը հասցված է: Իսպանական արտադրողները կարող են կորցնել մինչև շաբաթական 200 մլն եվրո՝ արտահանման դադարեցման պատճառով: Այդպես չեն վարվում մթերային տազնապի ժամանակ», - բողոքում է թերթը:

Գերմանական Die Welt-ը նկարագրում է իսպանական Ալմերիա գավառում ստեղծված իրավիճակը: Այս շրջանն ավանդաբար բանջարեղենի ու մրգի արտադրության շրջան է: Այս ճգնաժամը կարող է լուրջ վնաս հասցնել ուրուտին:

Անդալուզական փոքր գյուղերի բնակիչները, որոնք վարունգ են արտադրում ու վաճառում, կարծում են, որ մահացու վարակի բռնկումը տեղի է ունեցել այն արտադրողների պատճառով, ովքեր ձգտում են ռեկորդային ցուցանիշներ: «Դեռ 30 տարի առաջ, - բա-

ցատրում է լրագրող Լուիզե Վագները, - լուրիկի ու վարունգի բերքը հավաքում էին տարին մեկ անգամ: Այսօր բանջարեղենը հասնում է ամբողջ տարին՝ այդպիսի արդյունքի կարելի է հասնել միայն պեստիցիդներ ու պարարտանյութեր օգտագործելու դեպքում: Առողջ բանջարեղեն այդպիսի արտադրության դեպքում պետք չէ սպասել»:

Թերթը մեջբերում է նաև Hortofruticola «վարունգային» ձեռնարկության հարեւանությանը գտնվող՝ լուրիկի արտադրության մեջ մասնագիտացած Parafruits ագրարային տնտեսության տիրոջ կարծիքը: Նրա խոսքերով, արդեն եղել են բանջարեղենը կեղտաջրերով ոռոգելու դեպքեր:

Իրենք՝ վարունգ արտադրողները դեռևս չեն մեկնաբանում կատարվածը: Բայց նրանք էլ, գավառի իշխանություններն էլ վստահ են, որ վարակի ներթափանցումը տեղի է ունեցել տեղափոխե-

լի կամ պահեստներում: Մինչևե հիմա Իսպանիայում վտանգավոր հիվանդության ոչ մի դեպք չի գրանցվել: Անդալուզական երկու արտադրողների՝ Hortofruticola-ի եւ Pepino Bio Frunet-ի վարունգներում, արտահանումից առաջ, ստուգվել է E.coli շտամի բակտերիաների առկայությունը, արդյունքը բացասական է եղել:

Ի՞նչ է հայտնի Եվրոպային ահաբեկած բակտերայի մասին՝ հարցնում է Corriere della Sera թերթի թղթակից Ջուզեպե Ռեմուցին:

E.coli -ի հետազոտման պատմությունն սկսվել է 1950-ականներին: Ինչպես պարզել են գիտնականները, Coli բակտերիան կարող է տրոսիմ արտադրել, որը սպանում է երկվամյա երեխաները: Հետազոտողներն այն անվանեցին էկզոտոքսին: Coli բակտերիան ապրում է կովերի ու հորթերի ստամոքսում եւ նրանց ոչ մի վնաս

չի հասցնում: Բայց եթե մարդը վարակված միս ուտի՝ կարող է հիվանդանալ: Մասնագետների խոսքերով, վարակված սնունդ ուտելիս, ոչ բոլորն են հիվանդանում՝ 10-ից միայն երկուսի մոտ են խնդիրներ սկսվում երիկամների հետ (սուր երիկամային անբավարարություն): Հիվանդությունն առավել ծանր են տանում երեխաները՝ նրանք հակամարմիններ չունեն, այդ պատճառով էլ ավելի խոցելի են:

Ծանր դեպքերի բուժման համար կիրառվում են հեմոդիալիզ եւ պլազմաֆերեզ, պատմում է թերթը: Ինչպե՞ս փրկվել վարակից: Berliner Zeitung-ը հրապարակել է Բեռլինի հիգիենայի ինստիտուտի գլխավոր բժշկի խորհուրդները, ըստ որի պետք է ժամանակավորապես հրաժարվել բանջարեղենից՝ հասարակական սննդի վայրերում: Ինչ վերաբերում է դրանք տանն օգտագործելուն, փորձագետը խորհուրդ է տալիս լավ լվանալ

դրանք եւ կլպել, ինչպես նաև հետեւել ձեռքերի հիգիենային:

Հիգիենիստի խոսքերով, բակտերիայի շտամը կարող է գրեթե հավերժ ապրել բարձր խոնավության եւ 20-ից 50 աստիճանի պայմաններում, բացի դրանից, նման բարենպաստ պայմաններում էլ դրանք բազմանում են: «Բայց չոր սեղանին կամ վարունգի կեղտին, որն արեւի տակ է, դրանք արագ ոչնչանում են»:

Ինչպես նշում է փորձագետը, այս վերջին համաճարակի բռնկման պատճառն այսօր էլ հանելուկ է: «Սակայն սխալ կլիներ կենտրոնանալ վարունգի վրա՝ որպես վտանգավոր վարակի աղբյուրի: Հակառակ դեպքում նախազգուշական միջոցառումները կկանխեին վարակի նոր դեպքերը: Պարզ է մի բան. ինչ-որ մի տեղ սխալ է թույլ տրվել հիգիենայի մասով եւ նույնիսկ շարունակում է թույլ տրվել: Բայց այդ տեղը գտնելը հեշտ չի լինի»:

Կարունելների անվտանգությունը հսկողության տակ է

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում 2006-2010 թթ. գրանցվել է 47 կարունել: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության եւ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կողմից իրականացված մի շարք միջոցառումների արդյունքում 2010 թ. գրանցված կարունելների թիվն ավելացել է 61-ով:

Ա.թ. մայիսի 31-ի դրությամբ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում



գրանցված են 108 միավոր կարունել, որոնցից՝ երեսնամեկը՝ 71-ը, վաճառվում է՝ 9-ը, կապանում՝ 6 կարունել, Գյումրիում՝ 19-ը:

Նշված արտադրական վտանգավոր օբյեկտները՝ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, գրանցման են ներկայացվել դրանք շահագործող անձանց կողմից:

Հարկ է նշել, որ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի, հենց ԱՎՕ-ներ շահագործողներն են պատասխանատվություն կրում իրենց կողմից շահագործվող ԱՎՕ-ների անվտանգ շահագործման համար, ինչպես նաև դրանց գրանցման եւ տարեկան մեկ անգամ տեխնիկական անվտանգության փորձաքննության ներկայացման համար:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի եւ «Կարունելների անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգի» համաձայն միջոցառումներ են իրականացվում, մասնավորապես՝ կարունել շահագործող անձը շահագործման սեզոնից առաջ իրականացնում է նորոգման աշխատանքներ եւ ստատիկ ու դինամիկ փորձարկումներ, որից հետո ժամում է փորձաքննության: Փորձաքննության ժամանակ արտադրող պետք է լինի պատասխանատու անձ:

Ներկայումս գրանցված է 108 կարունել, տեխնիկական անվտանգության փորձաքննության պայմանագիր է կնքվել 65 կարունելի համար, որոնցից դրական եզրակացություններ են տրվել 56-ի, բացասական՝ 4-ի համար, իսկ 5-ը գտնվում են ընթացքի մեջ:

Թվով 43 կարունելի տեխնիկական անվտանգության փորձաքննության ժամկետը չի լրացել:

Նոր կանոնակարգ, նոր մոտեցումներ

Ներկայումս ՀՀ կառավարությունում վերջնական համաձայնեցման փուլում է «Կարունելների անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգի» նախագիծը, որի մշակման ժամանակ հիմք են ընդունվել Ռուսաստանի Դաշնությունում եւ Գերմանիայում գործող օրենսդրական ակտերի, նորմատիվների եւ ստանդարտների պահանջները՝ այն համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ ենթաօրենսդրական ակտերին: Մինչև կանոնակարգի ընդունումը եւ ուժի մեջ մտնելը ՀՀ կառավարության համձեռնարությամբ, կարունելներ շահագործողների հետ անցկացվելու են քննարկումներ, բացի դրանից, տարվելու են բացատրական աշխատանքներ՝ նրանց նոր պահանջներին ծանոթացնելու նպատակով:

Շուտով, կարունելների շահագործման անվտանգության մակարդակը բարձրացնելու համար, «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը նախատեսում է մասնագետներ գործուղել Սանկտ Պետերբուրգ եւ Կիև՝ ուսումնասիրելու այդ քաղաքներում կարունելների անվտանգ շահագործման ապահովման կազմակերպությունների փորձը: Փորձի ուսումնասիրման համար ընտրվել են մշակված երկրները, քանի որ սարքավորումների մեծ մասն արտադրվում է նրանց գործարաններում: Նախատեսվում է նաև ուսումնասիրել եւ առաջարկություն ներկայացնել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ կատարելու այնպիսի կարունելների աշխատանքը, որոնք շահագործվում են նորմատիվ-տեխնիկական պայմանների, ստանդարտների, տեխնիկական անձնագրերի խախտումներով, դրանց նկատմամբ կիրառել օրենսդրությամբ նախատեսված վարչարարական պատժամիջոցներ: Բացի դրանից, հուլիս ամսվա ընթացքում կկազմակերպվի կարունելների սպասարկման գործառնություններում ընդգրկված մասնագետների տեխնիկական անվտանգության որակավորում:


ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն

Գործընկերության ծառուղի

Կիրակի օրը «Աղվերան» հանգստյան համալիրում հավաքվել էին «Էլիտ Գրուպ» ընկերության բոլոր գործընկերները: Հանդիպումը, սակայն, ոչ թե գործնական բնույթ էր կրում, այլ՝ բնապահպանական: «Էլիտ Գրուպ» կողմից կառուցված հանգստյան տան տարածքում ընկերության բոլոր գործընկերներն իրենց անուններով ծառեր տնկեցին՝ այդպիսով ստեղծելով «գործընկերության ծառուղի»:

«Էլիտ Գրուպ» իր գործընկերների հետ առանձին-առանձին ամուր գործարար կապեր եւ արդյունավետ համագործակցություն ունի, իսկ այս միջոցառումը խորհրդանշական էր նրանով, որ ընկերության հետ համագործակցող բոլոր կազմակերպությունները համախմբվեցին կարեւոր գաղափարի ու գործի շուրջ՝ միասին նպաստել կանաչ տարածքների ավելացման ու բնության պահպանմանը: Ինչպես նշեցին ծառատունկի մասնակիցները՝ միջոցառումը նպաստեց, որ կազմակերպությունները ճանաչեն իրար, շփվեն ավելի մտերիմ ու ընկերական մթնոլորտում, ավելի ամրապնդեն իրենց կապերը: Յուրաքանչյուր ոք, ով իր անունով ծառ տնկեց, այսուհետ լինելու է նաև դրա խնամակալը:

Միջոցառման նպատակը մեկն էր. ուզում էինք մեր գործընկերներին համախմբել մեկ գաղափարի շուրջ՝ բոլորս միասին ծառատունկ անենք, ունենանք մեր սեփական ծառը, խնամենք եւ դրանով համախմբենք այն կոլեկտիվը, որի հետ աշխատում ենք: Փորձը ցույց տվեց, որ այդ գաղափարը բոլորին ոգևորեց: Ծառ տնկելը սիմվոլիկ նշանակություն ունի, դրանով շենացնում ենք մեր երկիրը, կանաչապատ տարածքներն ենք շատացնում: Այս գողտրիկ անկյունը դարձնում ենք ավելի զեղեցիկ, - ասաց «Էլիտ Գրուպ» ընկերության գլխավոր տնօրեն Արմեն Սկոյանը:



HSBC բանկի ներկայացուցիչ Տիգրան Մխիթարյանը ավելացրեց, որ միջոցառման օգնեց ընկերություններին համախմբվել մեկ վայրում եւ զարգացնել կանաչ գոտիները:

- Բնության համար կարեւոր է ոչ միայն պահպանումը, այլեւ՝ զարգացումը, իսկ ծառատունկը նպաստում է զարգացմանը: Եթե յուրաքանչյուր ոք մեկ ծառ տնկի, մենք որոշ ժամանակ անց մեծ անտառ կունենանք, - վստահեցրեց նա:

«Էլիտ Գրուպ»-ն իրականացնում է բնակելի եւ հասարակական էլիտար համալիրների շինարարության, ներքին հարդարման, դիզայնի եւ սպասարկման կառավարում:

Ընկերությունը ոչ միայն հանրապետության, այլեւ տարածաշրջանի առաջատարն է համարվում սեյսմակայուն շինարարության ոլորտում: Ընկերությունը նաև առաջններից էր, որ առանձին շենքերի կառուցապատումից անցավ ամբողջական համալիրների կառուցապատման: Զարյան եւ Բաբայան փողոցների միջև ընկած տարածքում սկսվել է «Հյուսիսային ճառագայթ» անունը կրող թաղամասի շինարարությունը, որն իր դիրքով ռազմավարական դեր ունի քաղաքի ճարտարապետական քարտեզում: Այն իրար է միացնելու Կոմիտասի պողոտան եւ Կասկադը՝ դառնալով մի ավարտուն համալիր:

«Էլիտ Գրուպը» լուրջ հայտ է ներկայացրել նաև հյուրանոցային բիզնեսի կառավարման ոլորտում: Բացի «Աղվերան Հոթել» հանգստյան համալիրից, ընկերությունը նաև մի քանի այլ՝ հաջողությամբ իրականացրած հյուրանոցային նախագծեր ունի՝ խոշոր առողջարանային համալիր Ջերմուկում, առանձնատների համալիր Ծաղկաձորում:



մասնագետի անկյուն

Հունիս ամսվա կլիմայական բնութագիրը եւ եղանակի կանխատեսումը

Հունիսին հանրապետությունում զգալիորեն մեծանում է ցերեկվա տեղումները եւ արեգակի բարձրությունը հորիզոնից, որի հետևանքով երկրի մակերեսային ստանում է զգալի ջերմություն: Ցերեկվա տեղումները մայիսի համեմատությամբ ավելանում է կես ժամով եւ դառնում 15 ժամ, ինչն ամենաերկարն է տարվա ընթացքում:

Նախորդ ամսվա համեմատությամբ միջին օրական ջերմաստիճանը բարձր է լինում 3-4 աստիճանով եւ հասնում է Գեղարքունիքում, Կոտայքում, Շիրակում, Արագածոտնի եւ Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +11... +14 °C, Լոռիում՝ +13... +15 °C, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ +17... +19 °C, Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում, Արագածոտնի եւ Վայոց ձորի նախալեռներում՝ +20... +23 °C: Երեւանի միջին ամսական ջերմաստիճանը 20.6 °C է, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 39.4 °C (1998 թ. հունիսի 22-ին), իսկ բացարձակ նվազագույնը՝ 1.7 °C (1967 թ. հունիսի 5-ին):

Հանրապետությունում ամենաբարձր ջերմաստիճանը հունիսին գրանցվել է Կապանում՝ 42 °C:

Հունիս ամսվա եղանակային ռեժիմի եւ տեղումների բաշխման էական առանձնահատկությունն այն է, որ հանրապետության հյուսիսային շրջաններում ամբողջ ամսվա ընթացքում, իսկ հարավային կեսում՝ ամսվա առաջին կեսին դեռեւս զգալի է ցիկլոնների, մթնոլորտային ճակատների, ինչպես նաեւ ներգամզվածային պրոցեսների առկայությունը:

Ամսվա երկրորդ կեսին հանրապետության հարավային շրջանները գտնվում են մերձավոր արեւելքի տաք օդային զանգվածների շրջանառության ներքո, որի հետևանքով տեղումների քանակն զգալիորեն պակասում է:

Հունիս ամսին տեղումների առավելագույն քանակը դիտվում է Լոռիում՝ 120-130 մմ, նվազագույնը՝ Արարատյան դաշտում եւ նրա նախալեռներում՝ 20-30 մմ:

Մայիսի համեմատությամբ որոշակիորեն պակասում է ամպամածության քանակը եւ երկնակամարի միայն 40-55 տոկոսն է ծածկված լինում ամպերով, գերակշռում են կոնվեկտիվ բնույթի հիմնականում կույտավոր եւ կույտանձրեային ամպերը:

Եղանակի վտանգավոր երեւույթներից դիտվում են ամպոլայներ, կարկուտ, ինչպես նաեւ ուժեղ քամիներ, հորդառատ անձրեւներ: Հորդառատ անձրեւները լեռնային շրջաններում պատճառ են հանդիսանում սելավների, որոնք կարող են տնտեսությանը զգալի վնաս հասցնել:

Արարատի եւ Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 21... 22 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի նվազում գիշերը մինչեւ 7... 12 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում, ցերեկը՝ մինչեւ 31... 33 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 8... 9 °C, առավելագույնը՝ 34... 35 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 17-29 մմ):

Շիրակի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 12... 15 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի



նվազում գիշերը մինչեւ 1... 5 °C, առանձին օրերի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 23... 26 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 2... 5 °C, առավելագույնը՝ 22... 26 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակից ավել (նորման 67-85 մմ):

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 14... 16 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի նվազում գիշերը մինչեւ 1... 5 °C, առանձին օրերի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 24... 27 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ 2... 4 °C, առավելագույնը՝ 25... 27 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 95-127 մմ):

նր 25... 27 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 95-127 մմ):

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 15... 19 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի նվազում գիշերը մինչեւ 3... 7 °C, առանձին օրերի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 27... 31 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ 5... 9 °C, առավելագույնը՝ 27... 30 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 91-104 մմ):

Վայոց ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է հովտային շրջաններում 20... 22 °C, լեռնային շրջաններում՝ 13... 15 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի նվազում գիշերը՝ հովտային շրջաններում մինչեւ 7... 10 °C, լեռնային շրջաններում՝ 1... 5 °C, առանձին օրերի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ հովտային շրջաններում 31... 34 °C, լեռնային շրջաններում՝ 25... 28 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը հովտային շրջաններում՝ 7... 8 °C, լեռնային շրջաններում՝ 1... 2 °C, առավելագույնը՝ հովտային շրջաններում՝ 32... 34 °C, լեռնային շրջաններում՝ 22... 23 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման հովտային շրջաններում՝ 34-46 մմ, լեռնային շրջաններում՝ 70-71 մմ):

Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է հովտային շրջաններում 20... 23 °C, լեռնային շրջաններում՝ 13... 16 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի նվազում, գիշերը՝ հովտային շրջաններում մինչեւ 7... 11 °C, լեռնային շրջաններում՝ 1... 5 °C, առանձին օրեր ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում 32... 35 °C, լեռնային շրջաններում՝ 25... 29 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը հովտային շրջաններում՝ 8... 11 °C, լեռնային շրջաններում՝ 3... 7 °C, առավելագույնը՝ հովտային շրջաններում՝ 32... 34 °C, լեռնային շրջաններում՝ 26... 27 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման հովտային շրջաններում՝ 31-66 մմ, լեռնային շրջաններում՝ 54-99 մմ):

Երեւան քաղաք

Օդի ամսական միջին ջերմաստիճանն սպասվում է 21... 22 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Ամսվա առաջին կեսում հնարավոր է ջերմաստիճանի նվազում գիշերը մինչեւ 7... 10 °C, առանձին օրերի ջերմաստիճանի բարձրացում, ցերեկը՝ մինչեւ 32... 34 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույն ջերմաստիճանը 8... 9 °C, առավելագույնը՝ 34 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է բազմամյա միջին քանակին մոտ (նորման 17-29 մմ):

L. Վարդանյան
ԱԻՆ Հայպետտիդոմեսի
տնօրեն

Ռուսաստանի հանելուկային շոգը

Ծայրահեղ շոգը, որն անցյալ տարի չորացնում էր Ռուսաստանի եվրոպական հատվածը, համաշխարհային Հիդրոօդերևութաբանական հանրության կողմից համարվեց ողբերգական, բայց՝ անբացատրելի երևույթ: Գիտնականները չգիտեն, թե որտեղից հայտնվեց այդ շոգը, չեն կարող պատասխանել նաեւ, թե ե՞րբ այն նորից կգա: Այսինքն, շատ հնարավոր է, որ հենց այս ամառ էլ գա:

Ամբողջ Ռուսաստանը պետք է հիշի Կալմիկիայի Հանրապետության Յաշկուլի շրջանում գտնվող Ուտա հիդրոօդերևութաբանական կայանի ամուրը. հենց այդտեղ 2010 թվականի հուլիսի 12-ին գրանցվեց Ռուսաստանում հիդրոօդերևութաբանական դիտարկումների պատմության ռեկորդային շոգը՝ 45.4 աստիճան: Գիտնականներն այսպիսի ցուցանիշ երբեք չեն կանխատեսել:

2010 թվականի հուլիսի 29-ին տեղի ունեցավ անհավանական մի իրադարձություն՝ Մոսկվայում ամսվա միջին ջերմաստիճանը գերազանցեց 30 աստիճանը: Սա պետք է կրկնել, որ հասկանալի չի

մի՞ միջին ջերմաստիճանը, այսինքն հաշվի են առնվել նաեւ գիշերային ժամերը: Գիտնականները նույնիսկ չէին էլ կարող ենթադրել այսպիսի բան:

2010 թվականի հունիս-օգոստոս ամիսներին գրանցվել է ցերեկային ջերմաստիճանի 17 ռեկորդային ցուցանիշ: Ռուսաստանի կլիմայագետները նման հիշատակում չեն գտել ոչ միայն եղանակի դիտարկման, այլև Ռուսաստանի ամբողջ պատմության մեջ:

Մոսկվայում գրանցված 50 օր տեւած շոգը մահացության սովորական ցուցանիշին 11 000 մահ ավելացրեց, հացահատիկի բերքը կրճատվեց երեք անգամ:

Կարո՞ղ էին հիդրոօդերևութաբանները կանխատեսել այս սարսափը: Եւ կարելո՞րդ. կարո՞ղ է այն կրկնվել մոտակա ժամանակներս՝ օրինակ, այս ամառ:

Ռուսաստանում հիդրոօդերևութաբանական դիտարկումներ արվում են արդեն 130 տարի, իսկ աշխարհում՝ 160 տարի: Գլոբալ միջին ջերմաստիճանն ակնհայտորեն աճում է՝ երկրի վրա գրանցված 12 ամենատաք տարիներից 11-ը 1994 թվականից հետո են եղել: Ռուսաստանի հուլիսները

լրիվ դուրս են համաշխարհային միտումների դաշտից. առաջին 65 հուլիսների (մինչեւ 1945 թվականը) միջին ջերմաստիճանը գործնականում չի տարբերվում հաջորդ 65 հուլիսների ջերմաստիճանից: Երկու կեսերում էլ կան գագաթնակետեր՝ 1930-ի եւ 1980-ի հուլիսները: Ռուսաստանի անցյալ տարվա շոգը, ըստ մասնագետների, արմատապես տարբերվում է 2003 թվականի Արեւմտյան Եվրոպայի շոգից, որը մոտ 50 000 մարդու կյանք խլեց: Եվրոպական շոգը գլոբալ տաքացման տրամաբանական շարունակությունն է, այսինքն՝ մարդու գործունեության արդյունք է: Եւ նրանք դրա հավանականությունը կանխատեսել էին:

Բայց ռուսական եղանակը ոչ մի հիմք չունի իրեն այդպես պահելու: Կարելի է թեւեւ նշել, որ վերջին 65 տարիներին ռուսական հուլիսների ջերմաստիճանի տատանումներն ավելի շատ էին, քան առաջին 65 տարիների, բայց կարելի է արդյոք այդքան էական համարել այդ տատանումները: Գիտնականներն այդպես չեն կարծում:

ԱՄՆ-ի օվկիանոսի եւ մթնոլորտի հետազոտությունների ազգային վարչության Երկրի համակարգերի հետազոտության լաբորատորիայի օդերևութաբանների խումբը՝ Ռենդալ Դոուլի գլխավորությամբ, երեք տարբեր մեթոդներով

տորիայի օդերևութաբանների խումբը՝ Ռենդալ Դոուլի գլխավորությամբ, երեք տարբեր մեթոդներով



ներ է կիրառել անցյալ տարվա ամառն անոնյա շոգի՝ ավելի ծիշտ սպանիչ շոգի, պատճառները վերլուծելու համար

Առաջին մեթոդը հիմնված էր 22 մոդելների վրա, որոնց հաշվարկների ժամանակ հաշվի էին առնվում ջերմոցային գազերի, աերոզոլների կուտակումների ամսական տատանումները՝ այդ թվում էւ ածխաթթու գազ պարունակող, ինչպես նաեւ արեւային ռադիացիան եւ հրաբխային երեւույթները 1880-ից 1999 թթ. ընկած ժամանակահատվածում: Այդ բոլոր մոդելները ոչինչ չբացատրեցին:

Երկրորդ մեթոդը հիմնված էր 2010 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին մթնոլորտի վիճակի երկու սիմուլյատիվ մոդելների վրա: Դրանցից յուրաքանչյուրը՝ այլ ցուցանիշների թվում, ներառում էր ծովի մակարդակի ջերմաստիճանի, օդում ածխածնի երկօքսիդի պարունակության ցուցիչները եւ ծովի սառցե ծածկույթի վիճակը: Ստացված տվյալները համեմատվում էին 1971-2000 թվականների մասնատիպ մոդելավորման հետ: Եւ նորից՝ ոչ մի բացատրություն:

Երրորդ մեթոդը կազմված էր ԱՄՆ-ի օվկիանոսի եւ մթնոլորտի հետազոտությունների ազգային վարչության եղանակի ստանդարտ կանխատեսման տվյալների վերլուծության վրա՝ հաշվի առնելով 2010 թվականի հուլիս-օգոստոս ամիսների եղանակային տվյալները: Կանխատեսումներն օդերևութաբանորեն ճիշտ ստացվեցին, բայց մերժվեցին:

Մի խոսքով, գիտնականները չպատասխանեցին, թե ինչու եղավ այդ շոգը: Իսկ դա նշանակում է, որ մենք անպաշտպան ենք տարերքի առաջ:

Կիրիլ Յանին
Citizen K



Աղետի վկաները

Մափտակի երկրաշարժից արդեն ավելի քան 20 տարի է անցել, բայց այդ ավերիչ աղետի մասին հիշողությունները դեռ չեն խամրել: Ոմանց համար դրանք անվերջ մղձավանջների պատճառ են, ոմանց համար էլ նոր որոնումների ու ձեռքբերումների խթան: Այս համարից ձեռք ենք ներկայացնում Մափտակի վկաների հիշողություն-վկայությունները, որոնք կօգնեն չմոռանալ աղետի դասերը:

Հրաչյա Ոսկանյան Գյումրիի փրկարարական ջոկատի փրկարար

1988-ի դեկտեմբերի 7-ին ժամը 12-ի կողմերը տուն պիտի գնայի մախանաչի: Կոշիկի գործարանում էի աշխատում: Ուզում էի արդեն դուրս գալ, մեկ էլ դռնից լսվեց՝ շատ ուժեղ ձայն, ու շենքը սկսեց փլվել: Ամեն մարդ իր ճամփով վազեց. մեկը ճվաց, մյուսն ընկավ: 9 հարկանի շենքի տակն էինք, մենք չհասցրեցինք դուրս փախչել, կեսը դուրս փախան, կեսը մնացին: Եղ ժամանակ ոչ վախ կար, ոչ էլ կհասկանայինք՝ ինչ է: Մի երկուրեք անգամ ցնցեց, զգացվեց արդեն, որ շենքը լրիվ փլվեց: Ես մնա-

ցի փլատակներում: Բերանս ահավոր փոշի էր լցվել: Եղ պահին ցավ չէի զգում, հետո եմ զգացել բոլոր ցավերը՝ կողի կտրվածք, ձեռքի, ոտքի: Գլուխս էր շատ ուժեղ վնասվել. չգիտեմ պահե՞լ էր, թե՞ արմատուրա էր կպել զլխիս, բայց արյան մեջ էի:

Ես ինքնուրույն դուրս եկա փլատակներից, տեսա, որ կողքս լիքաված մարդիկ շատ կային, պանելների տակ էին: Դեպի տան կողմը վազեցի: Տեսա, որ 9 հարկանի շենքերը չկան: 5 հարկանիներից շատերը նույնպես հողին էին հավասարվել: Ժողովուրդը լացուկոծի մեջ էր: Վազեցի տուն, որ ծնողներիս ու եղբայրներիս տեսնեմ: Փառք Աստծո, իրենք այսօր ողջ են ու առողջ: Գնացի, տեսա՝ մեր շենքը չկա: Եղբայրներիցս մեկը դարձրեց, որ մյուսը գործի տեղն էր: Ծնողներս նույնպես աշխատում էին:

Բժշկական օգնություն ինձ ոչ ոք ցույց չտվեց: Չմայած հրապարակի մոտ շտապօգնություն կար: Եփշտ է՝ ես մտել եմ այդտեղ, բայց մի երկու րոպեով, հետո դուրս եմ եկել: Ցավ չէի զգում սկզբից, ինձ թվում էր՝ բան չի եղել: Բայց երկրորդ օրը ցավերս սկսեցին: Մինչև հիմա էլ վնասվածքներս իրենց

զգալ են տալիս: Եղանակի փոփոխության հետ ցավեր եմ ունենում: Բայց ամենածանրը հոգեկան ցավերն են, հիշելուց չեմ կարողանում չիուզվել:



Յիշում եմ՝ այդ ժամանակ Կրաստանից օգնող մարդիկ շատ կային, Ռուսաստանից էլ էին եկել: Բայց ես հիմա ատում եմ երկրորդ, երրորդ օրվա մասին: Իսկ հենց առաջին օրը հարազատներն ու

մարդիկ էին տանջվում, որ օգնեն: Փլատակներից տուժածին համելիս ձեռքներին գործիք չկար՝ փայտ, լոճ, ուն ձեռքն ինչ ընկել էր: Ձայներն ահավոր էին, ամեն տեղ

զուռ, խմում էին, բայց ներքին օրգանները որ լիքաված էին լինում, էր ջրի պատճառով մի 5-10 րոպե հետո մահանում էին: Կամ ասենք՝ դուրս կբերեին, մի պահ կնայեին իրար երեսի ու կմահանային: Չէինք իմանում՝ ինչն ինչոց է, այդ հիմա է, որ սովորել ենք, արդեն գիտենք: Հիմա դեպքերի ժամանակ մարդուն ավելի ճիշտ ու կոնկրետ ես մոտենում: Այն ժամանակ, օրինակ, դուռն էին, սղոցով ձեռք ու ոտք կտրում էին, որ կարողանան դուրս հանել: Իսկ հիմա հատուկ գործիքներ կան, որ առանց տուժածին ավելորդ տեղը վնասելու՝ հանում ենք փլատակից:

Երկրաշարժից հետո ես դարձա փրկարար: Այս աշխատանքն ինձ օգնում է, փակում է հիշողությունս: Ես ուզում եմ մարդկանց միշտ օգնել, որ իմ տեսած տառապանքներն ուրիշները չտեսնեն: Չեմ ուզում, որ ինչ-որ մեկն զգա էն, ինչ ես եմ իմ մաշկի վրա զգացել: Փրկարարը պիտի վախ չունենա: Պիտի կարողանա դիմացինին համոզատացնել, հոգեկան ծանր վիճակից դուրս բերել: Պիտի հասկանա տուժածի հոգին, էլ ցավը պիտի իր ցավի պես զգա:

ԱՆԻ Ստեփանյան

հոգեբանի սենյակ

Երբ աշխատանքը երջանկացնում է

Մ Աշխատանքը մարդու գործունեության կարևոր ոլորտներից մեկն է: Մակայն միշտ չէ, որ արթնանալով ամեն առավոտ, անհամբեր սպասում ենք, թե երբ ենք հասնելու աշխատավայր: Մեզ հից շատերին ոչ միշտ է հաջողվում զբաղվել այն գործով, որը մեզ հաճույք է պատճառում: Այսօր փորձենք հասկանալ, թե որոնք են մեր դժգոհությունների իրական պատճառները, այդ ի՞նչն է, որ չի բավարարում մեզ մեր աշխատանքում եւ ի՞նչ տեղ է այն գրավում մեր կյանքում:

սի մասնագիտություն, որը մեր սրտով չէ, զբաղվում ենք այնպիսի գործով, որով ստիպված ենք զբաղվել: Քիչ չեն դեպքերը, երբ երեխաներն ընտրում են այն մասնագիտությունը, որը երազել են իրենց ծնողները: Այսինքն, երեխան կյանքի է կոչում ծնողների երազանքները, կարծելով, թե դա ինքն էլ է ուզում: Տարիներ անց, երբ մարդը հասնում է իր մասնագիտա-

են, ապա կարելի է համարել, որ նա կկարողանա գտնել այն գործը, որն իրեն հաճելի կլինի: Ինչու՞ եմ ես այս աշխատանքն անում, աշխատելիս ինձ համար կարեւորը աշխատավարձն է, ստեղծագործելը, թե՞ ինքնաիրականանալը: Այսինքն ինչպե՞ս եք դուք վերաբերվում ձեր աշխատանքին՝ որպես սիրած զբաղմունքի՞, եկամտի աղբյուրի՞, թե սեփական հնարա-

պատճառում, մարդը հեշտությամբ է հաղթահարում բոլոր դժվարությունները:

Աշխատանքը խլում է մեր օրվա մեծ մասը: Տանը մենք հաճախ ենք պատմում մեր աշխատանքի մասին, հարցումք ենք անում մտերիներին, աշխատանքի ժամանակ կատարված նույնիսկ ամենապարզունակ իրավիճակն ընկալում ենք որպես կենսական կարեւոր հարց: Մենք չափազանց լուրջ ենք մոտենում մեր աշխատանքին, մեծ էներգիա ենք ներդրում, եւ ամենափոքր բացթողումը կարող է ազդել մեր ինքնագնահատականի վրա ու հիասթափեցնել մեզ:

Զգալ սեփական անձի անհրաժեշտությունը

Կան շատ իրավիճակներ, որոնք ստեղծում են ներքին կոնֆլիկտներ: Մենք դժվարանում ենք ընտրություն կատարել աշխատանքի եւ կյանքի այլ արժեքների միջեւ, գտնել հավասարակշռություն կյանքի եւ աշխատանքի միջեւ: Որպեսզի երջանիկ զգանք, մեզ անհրաժեշտ է գիտակցել, որ մենք ինչ-որ կարեւոր, ինչ-որ մեկի կյանքը դեպի դրականը փոխելու գործ ենք անում:

Դիտարկեք ձեր աշխատանքն այլ տեսակետից

Եթե դուք անընդհատ դժգոհ եք եւ ձեզ չի բավարարում ձեր աշխատանքը, դուք հաճույք չեք ստանում ձեր կատարած գործից, ապա փորձեք վերլուծել եւ հասկանալ, թե ի՞նչ է ձեզ հետ կատարվում, ի՞նչ եք դուք իրականում ուզում: Փորձեք հասկանալ, թե ինչու՞ դուք հաճույք չեք ստանում ձեր աշխատանքից, իսկ մյուսներին դա լիովին հաջողվում է: Դիտարկեք իրավիճակը կողքից: Եթե արձակուրդ

եք զնայեցե՛ք, ապա փոխեք ձեզ արդեն սովորական դարձած կյանքի ռիթմը: Պատասխանեք հետեւյալ հարցերին՝ ի՞նչ է ձեզ իրականում անհրաժեշտ, ի՞նչ առավելություններ եւ բերություններ ունի ձեր աշխատանքը: Եթե դուք վաղը դուրս գաք աշխատանքից, ապա ի՞նչն ամենից շատ ձեր կյանքում կպահպանի: Այն, ինչը մեզ տհաճ է եւ դուր չի գալիս, մենք առանց դժվարությունների կարողանում ենք մոտաբերել, իսկ այն, ինչ մեզ համար թանկ է, մենք հաճախ չենք էլ նկատում կամ ուշադրություն չենք դարձնում: Իրականում ոմանց համար բավական է լինում որոշակի փոքրիկ փոփոխությունն աշխատանքային վայրում, որն էլ փոխում է աշխատանքային օրը: Հաճախ մենք նկատում ենք, որ աշխատանքն ընտրել ենք ավելի շատ առաջնորդվելով արտաքին գործոններով, քան՝ ներքին պահանջներով: Այդ ժամանակ շատ կարեւոր է վերականգնել անկախության զգացողությունը, այսինքն՝ ձեզ հնարավորություն տվեք պլանավորել ձեր խնդիր արարքները, քանկությունները, որոնք էլ ձեզ մեծ էներգիա կհաղորդեն:

Փնտրեք երջանկություն նաեւ այլ գործունեության մեջ

Հիշեք՝ որքան էլ աշխատանքը կարեւոր է, ամեն դեպքում այն պետք է միայն մի որոշակի տեղ ունենա ձեր կյանքում: Մի՛ գերազնահատեք նրա դերը: Շատ կարեւոր է գիտակցել, որ իդեալական աշխատանք գոյություն չունի: Այն, ինչը մեզ չի բավարարում աշխատանքի վայրում, մենք կարող ենք լրացնել կյանքի այլ ոլորտներում:

ԱՆՆԱ Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Հարված ընթերցողի նամակից

Մի օր ես գիտակցեցի, որ իմ կյանքի 12 տարիներն անիմաս են անցել՝ առանց որեւէ հեջ թողնելու եւ իմաստ հաղորդելու իմ կյանքին: Կարծես իմ կյանքը նման լինեք ավազի, որը լուծվեց ջրում: Կողմից մի՞տք բվացել է, թե իմ աշխատանքային կյանքը ցան հետաքրքիր է, սակայն իրականում ես կարծես ֆիլմ եմ դիտել ուրիշ մարդու մասին, չեմ աղբյուր, չեմ եղել այն գործունեության մեջ, ինչով զբաղվել եմ 12 տարի:

Իրականում շատ կարեւոր է, որ մարդն զբաղվի այն գործով, որը սիրում է եւ ինչը նրան հաճույք է պատճառում: Դեռեւս Կոնֆուցիոսն է ասել՝ «Արեք այն, ինչ սիրում եք անել եւ ձեր կյանքում չի լինի ոչ մի աշխատանքային օր»: Սակայն հաճախ մենք ընտրում ենք այնպի-



կան աճի կետին, այդ ժամանակ միայն սկսում է գիտակցել, որ զբաղվում է մի մասնագիտությամբ, որն իր հետ ոչ մի կապ չունի: Բայց երբեք էլ ուշ չէ՝ սկսել զբաղվել այն աշխատանքով, որն իրականում հաճույք է պատճառում մարդուն: Այստեղ առաջանում է ամենամեծ հարցը՝ ո՞րն է այդ աշխատանքը:

Չկա իդեալական աշխատանք

Երբ մարդը կարողանում է գտնել այն հարցերի պատասխանները, որոնք իրեն անհանգստացնում

վորություններն իրականացնելու եւ դրսեւորելու մի ճանապարհի: Այս հարցը մարդկությանն անհանգստացրել է միշտ եւ կշարունակի անհանգստացնել:

Շատերի համար աշխատանքի մասին պատկերացումը կապված է որպես անձ աճելու հետ: Նույնիսկ եթե մենք հիացած չենք մեր աշխատանքով, ամեն դեպքում պետք է փորձել ինչ-որ հետաքրքիր բան գտնել դրա մեջ: Երբ մարդն աշխատում է միայն աշխատավարձի համար, այդ ժամանակ աշխատանքից բավարարվածություն չի ստանում: Երբ աշխատանքը հաճույք է



Կլիմայի փոփոխությունը սպառնում է հացաբույսերին

ԱՄՆ-ում կա մի քաղաք, որն անընդհատ վառվում է ահա արդեն 47 տարի

1962 թվականի մայիսին, Սենթրալիայի Քաղաքային խորհուրդը (Փենսիլվանիա, ԱՄՆ) վարձեց 5 հրշեջ-կամավորականի՝ մաքրելու համար քաղաքային աղբահորը, որը գտնվում է «Odd Fellows» գերեզմանատնից քիչ հեռու՝ լքված մի հանքավայրում: Հրշեջները, ինչպես նախկինում էլ էին արել, այրեցին աղբակույտերը եւ որոշ ժամանակ անց հանգ-

տարաներում 77,8 աստիճան էր, ըստ Ցելսիուսի: Նահանգի մասշտաբով հրդեհի հանդեպ ուշադրությունը սկսեց աճել եւ բարձրագույն կետին հասավ 1981 թվականին, երբ 12-ամյա Թոդ Դոմբոսկին ընկավ գետնափոր հորը, 1,2 մետր լայնությամբ եւ 45 մետր խորությամբ, որը հանկարծակի բացվել էր նրա ոտքերի տակ: Տղան փրկ-

հարկադրական օտարման թույլտվություն պահանջեց, պատճառաբանելով, որ դրանք օգտագործման համար պիտանի չեն: Բնակիչների դատարանի միջոցով հիմնախնդրի որեւէ լուծման հասնելու դրան հետեւած փորձը ձախողվեց: 2002 թվականին ԱՄՆ-ի Փոստային ծառայությունը չեղյալ հայտարարեց քաղաքի փոստային ցուցիչը՝ 17927:



Սենթրալիայում փաստորեն բնակեցված տներ չմնացին: Շինությունների մեծ մասը քանդվեց, եւ այդ շրջանը հիմա նման է մարգագետնի, որի միջով մի քանի փողոց է անցնում: Քաղաքի մեծ մասը ծածկված է մացառուտներով: Քաղաքում մնացած միակ Սուրբ Կույս Մարիամի եկեղեցին, որը պատկանում է ուկրաինական հունակաթոլիկական թեմին, ամեն շաբաթ օր գիշերը պատարագ է մատուցում: Քաղաքում կա չորս գերեզմանոց:

Միակ նշանները հրդեհի, որն զբաղեցնում է մոտավորապես 1,6 քկմ տարածք եւ փռված է չորս ճակատով, ցածր ու կլոր, մետաղական գուլորշային կափույրներն են քաղաքի հարավում եւ մի քանի ցուցանակները, որոնք զգուշացնում են ստորգետնյա հրդեհի, ամհաստատ հողի ու շնուլ գագի մասին: Կարելի է նաեւ տեսնել ծուխն ու գուլորշին, որ ելնում են փենսիլվանյան 61 մայրուղու լքված հատվածից (փակվել է 1990-ական թթ. այն բանից հետո, երբ ճանապարհի վրա հայտնվել են մի քանի մեծ ճեղքվածքներ), բլուրների վրա տեղակայված գերեզմանոցին մոտիկ վայրերից եւ ամբողջ քաղաքի տարածքով մեկ փռված բնահողի ճեղքերից: 61 մայրուղու երթուղին փոխվել է, շրջանցիկ ճանապարհ է սարքվել, որն անցնում է լքված քաղաքի կողքով: Սակայն ստորգետնյա կրակը դեռ վառվում է, եւ դա կշարունակվի անորոշ ժամանակով: Կրակը հանգցնելու ոչ մի փորձ չի արվում: Քարածուխ այնտեղ այնքան կա, որ այդ կրակը կարող է սնել եւս 250 տարի:

Քրիստոֆ Չայլերն իր հոդվածում, որը տպագրվել է *Der Spiegel* հանդեսի կայքէջում, գրում է վերջին հետազոտությունների մասին, որոնք հաստատում են գլոբալ տաքացման կործանարար ազդեցությունը հացաբույսերի բերքի վրա ամբողջ աշխարհում, եւ առաջին հերթին ցորենի ու եգիպտացորենի:

Այդպիսի հետազոտություններից մեկը, որն իրականացրել է Դեյվիդ Լոբելը՝ երկու գործընկերոջ հետ Ստենֆորդի համալսարանում, հրապարակվել է *Science* հանդեսում: Քննության է ենթարկվել 1980-2008 թվականների ցորենի, եգիպտացորենի, սոյայի եւ բրնձի բերքը:

Բացարձակ քվերով բոլոր այդ մշակաբույսերի բերքատվությունը զգալիորեն աճել էր, սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, զոնե ցորենի ու եգիպտացորենի դեպքում աճն ավելին կլիներ, եթե բացառվեր գլոբալ տաքացման գործոնը:

Եզրակացություններն արվել են ըստ համակարգչային մոդելավորման:



«Տվյալների հետազոտման ժամանակ գիտնականները հայտնաբերեցին ուշագրավ մի բացառություն, - գրում է հեղինակը: - ԱՄՆ-ի ցանքատարածքները, որտեղ ստանում են եգիպտացորենի եւ սոյայի համաշխարհային բերքի 40 տոկոսը, ուսումնասիրվող 30 տարիների ընթացքում տաքացման չեն ենթարկվել, ի տարբերություն աշխարհի այլ հատվածների գյուղատնտեսական հողատարածքների»:

Նույն այդ ժամանակահատվածում եղանակի փոփոխության

«զգալի ազդեցությունն են կրել Ռուսաստանի, Թուրքիայի եւ Մեքսիկայի ցորեն արտադրողները»: «Այդ տեղերում տապը հատկապես ուժգին է ազդել բերքի ծավալների վրա, շեշտում է հեղինակը: - Բարձր ջերմաստիճանները նաեւ եգիպտացորենի բերքի լուրջ կորուստների են հանգեցրել Չինաստանում եւ Բրազիլիայում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2100 թվականին, ՄԱԿ-ի տվյալներով, Երկրի վրա կապրի 10,1 միլիարդ մարդ, 3 միլիարդով ավել, քան այսօր, սննդամթերքի մատակարարման հիմնախնդիրը դառնում է հատկապես կարեւոր: Արդեն իսկ այսօր Երկրի մոտ 1 միլիարդ բնակիչ բավարար սնունդ չի ստանում, ասվում է հոդվածում:

Բացի դրանից, բերքատվության նվազումն իր հետեւից կբերի սննդամթերքի գների բանկացման ամբողջ աշխարհում: Թեեւ, որոշ փորձագետների կարծիքով, աճող գները կարող են գյուղացիներին մղել դեպի ինովացիաների ճանապարհը, ինչի հետեւանքով կարող էին շահել ոչ միայն արտադրողներն, այլեւ սպառողները: Այսպես՝ Քերի Ֆաուլերը՝ Դոնոնում հիմնա-

վորված Global Diversity Trust-ի ղեկավարը, առաջարկում է զարկ տալ այն մշակաբույսերին, որոնք ջերմադիմացկուն են: Նրան, սակայն, առարկում է Կոլֆրան Շլենկերը՝ Կոլումբիայի համալսարանից, որը համազործակցում է նաեւ Նյու Յորքի National Bureau of Economic Research-ի բույսերը կլիմայի փոփոխություններին հարմարեցնելը շատ բարդ է, համոզված է նա, «այլապես ԱՄՆ-ի հարավի բնակիչները վաղուց դա արած կլինեին»: «Այդ առումով ես հոռետես եմ», - ավելացնում է նա:

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է Աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն(ներ) զբաղեցնելու մասին

Ֆինանսատնտեսագիտական վարչություն (այսուհետ՝ Վարչություն) հաշվապահական հաշվառման եւ հաշվետվությունների կազմման բաժնի (այսուհետ՝ Բաժնի) առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 34/1-4.1-5)

Մասնակցում է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հայտերի վճարման փաստաթղթերի կազմման աշխատանքներին, իրականացնում Բաժնի առջին դրված գործառնություններից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների եւ այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքները, կատարում է համակարգչային մուտքագրման աշխատանքներ, նախապատրաստում իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաեւ դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ եւ ու-

ղեցույցներ, մասնակցում Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իրականացնում սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն.
- տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- այս կետում նշված պաշտոնի անձնագրերի 10-րդ կետի բ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

• համակարգչի եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ ծրագրային միջոցների տիրապետում.

• անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ նշված պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ ԱԻՆ ՀԾԾ (ք. Երեւան, Դուշկինի 25) պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում.
- կրթությունը հավաստող պետական մուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները.

• աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում) քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.

• արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակրչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը կամ համապատասխան տեղեկանք.

• մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափի.

• անձնագրի պատճենը: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ 12:30-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2011 թ. հունիսի 17-ը:

